ՆԱԽԱԳԻԾ 38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_____» _____20 թվականի N____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐՄԱՎԻՐ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հաստատել՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցման և մի շարք քրեակատարողական հիմնարկների գազաֆիկացման և ջեռուցման միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն որոշման հավելված N 1-ով իրականացվող միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ. Թովմասյան

Հավելված 1
ՀՀ կառավարության 2011թ, _____ «___»
թիվ __ որոշման

ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐՄԱՎԻՐ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը նախատեսած է 1240 դատապարտված անձանց պահելու համար, նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմվել են 2007 թվականին, նույն թվականից էլ սկսվել է շինարարական աշխատանքները: Մինչև 2009 թվականի մարտ ամիսը ՔԿ հիմնարկում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1) արտաքին պարիսպի կառուցում՝ 1196.8 մ ^{3}.

2) ներքին արգելապատի հիմքի իրականացում՝ 775.6 մ^3.

3) բոլոր մասնաշենքերի հիմքերի իրականացում՝ 13 500 մ^3.

4) հիմքերի ջրամեկուսացում՝ 26 400 մ^2.

5) տարածքի պլանավորում զրոյական մակարդակի՝ 18 700 մ^2.

6) բոլոր մասնաշենքերի ցոկոլային հատվածի կառուցում՝ 6 000 մ^3:

«Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցման և համապատասխան սարք-սարքավորումներով հագեցման համար 2007 թվականի նախագծա-նախահաշվային փաստաթղթերով անհրաժեշտ էր 8,322,0մլն դրամ, որից իրացվել է 2,587.2 մլն. դրամը, ներառյալ՝

1) 2006 թվականին՝ 11.5 հա հողատարածքի ձեռք բերում՝ 111,1 մլն. դրամ.

2) 2007 թվականին՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում՝ 119,0 մլն. դրամ, կապիտալ շինարարություն՝ 456,8 մլն. դրամ.

3) 2008 թվականին՝ կապիտալ շինարարություն՝ 1,604,9 մլն. դրամ, հեղինակային հսկողություն՝ 3,4 մլն. դրամ, տեխնիկական հսկողություն՝ 32,0 մլն. դրամ.

4) 2009թվականին նախատեսվել է կապիտալ շինարարություն 1,307.7մլն. դրամի, որից նույն տարում՝ որպես կանխավճար, վճարվել է 260.0 մլն. դրամ, իսկ մնացորդային գումարը ՀՀ կառավարության 2009թ. մարտի 26-ի թիվ 302-Ն որոշմամբ ժամանակավորապես կասեցվել է:

Նկատի ունենալով քրեակատարողական հիմնարկների առկա գերբնակեցվածություն պայմանները՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի շինարարական աշխատանքների վերսկսման ուղղությամբ, մասնավորապես՝

1. Անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից 2013 թվականի փետրվար ամսին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը ամրացված՝ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի զբաղեցրած՝ Երևանի Արշակունյաց 2 հասցեում գտնվող 6355 մ^2 ընդհանուր մակերեսով համալիրն ու 1.7 հա. ընդհանուր մակերեսով հողատարածքը՝ ոչ պակաս քան 5,600,000.0 հազար դրամ գումարով: Միաժամանակ, գնորդի հետ կնքելով պայմանագիր գույքի հանձման և վճարման ժամանակացույցի վերաբերյալ, մասնավորապես պարտադիր պայման սահմանելով, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը տարածքն ազատելու է ոչ շուտ քան 2014 թվականի 2-րդ կիսամյակում, իսկ գնորդն օտարվող գույքի արժեքից 3,000,000.0 հազար դրամը վճարելու է ոչ ուշ քան 2013 թվականի 1-ին եռամսյակում:

2. 2014 թվականի 1-ին եռամսյակում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը ամրացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Բ. Ֆանարջյան 76 հասցեում գտնվող «ՈՒռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 6,65 հա. ընդհանուր մակերեսով հողատարածքը և 29455 մ^2 ընդհանուր մակերեսով գույքը:

3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից 2014 թվականի 1-ին եռամսյակում «ՈՒռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի գույքն ընդունելուց հետո սույն ծրագրի 1-րդ կետով նախատեսված ժամանակացույցում սահմանվող ֆինանսական միջոցներից ոչ ավել քան 600.000.0 հազ. դրամ գումարն ուղղել «ՈՒռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 29455 մ^2 ընդհանուր

մակերեսով գույքի հարմարեցմանը «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի չափանիշներին:

4. Անհրաժեշտ է 2014 թվականի փետրվար ամսին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, օտարել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը ամրացված՝ քրեակատարողական վարչության՝ Երևան քաղաքի Արշակունյաց 63 հասցեում գտնվող 0.6187հա ընդհանուր մակերեսով հողատարածքն ու 2000 մ^2 ընդհանուր մակերեսով վարչական շենքը՝ մեկնարկային գինը սահմանելով ոչ պակաս քան 2,600,000.0 հազար դրամ: Միաժամանակ գնորդի հետ կնքելով առուվաճառքի պայմանագիր ներառելով պայման գույքի հանձման-ընդունման և վճարումը կատարելու ժամանակացույցի վերաբերյալ, մասնավորապես պարտադիր պայման սահմանելով, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն քրեակատարողական վարչությունը տարածքն ազատելու է ոչ շուտ քան 2015 թվականի 1-ին եռամսյակում, իսկ գնորդն օտարվող գույքի արժեքն ամբողջությամբ վճարելու է ոչ ուշ քան 2014 թվականի 2-րդ եռամսյակում:

5. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմը 2014 թվականի 4-րդ եռամսյակում նոր շենք տեղափոխվելուց հետո, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության աշխատակազմը անհրաժեշտ է տեղափոխել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Հալաբյան 41ա հասցեում գտնվող մասնաշենք:

6. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից սույն ծրագրի 1-ին կետում նշված գույքի գնահատումը պետք իրականացվի 2012 թվականի դեկտեմբեր ամսին, իսկ 4-րդ կետում ներառված գույքի գնահատումը 2013 թվականի դեկտեմբեր ամսին:

7. Սույն ծրագրի 1-ին և 4-րդ կետերով նշված գույքերի օտարումից Երևանի բյուջե օրենքով սահմանված չափով մասհանվող միջոցները Երևանի քաղաքապետարանի կողմից պետք է ամբողջությամբ վերադարձվեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կապիտալ շինարարության աշխատանքներին և մի շարք քրեակատարողական

հիմնարկների գազաֆիկացման և ջեռուցման աշխատանքներին աջակցելու նպատակով:

8. Սույն ծրագրի 1-ին և 4-րդ կետերով արտացոլված գույքերի օտարումից ստացված ֆինանսական միջոցների հաշվին 2014 թվականին անհրաժեշտ է ամբողջությամբ ավարտել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կապիտալ շինարարության աշխատանքները, միաժամանակ իրականացնել անհրաժեշտ գույքի, սարքավորումների և ինժեներատեխնիկական միջոցների ամբողջական ապահովումն ու արդյունքում «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը գործարկել ամբողջ ծավալով՝ 1240 դատապարտյալների և կալանավորված անձանց պահելու համար:

Հավելված 2
ՀՀ կառավարության 2011թ, _____ «___
թիվ __ որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐՄԱՎԻՐ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

(հազար դրամներով)

		Նախագծա-նախահաշվային արժեք	2006-2009թթ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին փաստացի ֆինանսավորում	Նախահաշվային արժեքի մնացորդային գումար	2011թ. պետական բյուջեով նախատեսված գումար	2012-2014թթ. ՄԺԾԾ-ով 2012թ. համար նախատեսված գումար	գույքերի օտարումից ստացված միջոցների հաշվին	
							2013թ.	2014թ.
1	<<Արմավիր>> քրեակատարողական հիմնարկի կառուցապատման աշխատանքներ	8 339 037,3	2 476 098,7	5 862 938,6	1 000 000,0	1 000 000,0	2 000 000,0	2 500 000,0
2	<<Արմավիր>> քրեակատարողական հիմնարկի գույքի, սարքավորումների և ինժեներատեխնիկաման միջոցների ապահովում						1 000 000,0	1 608 395,1

3	<<ՈՒռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ի վարչական շենքի հարմարեցումը <<Դատապարտյալների հիվանդանոց>> քրեակատարողական հիմնարկի չափանիշներին							600 000,0
4	<<Կոշ>> և <<Սևան>> քրեակատարողական հիմնարկների գազաֆիկացման և ջեռուցման համակարգերի ներդնում						491 604,9	

1. Նախագծա-նախահաշվային արժեքում ներառված է նաև <<Արմավիր>> քրեակատարողական հիմնարկի գույքի, սարքավորումների և ինժեներատեխնիկաման միջոցների ապահովման գումարները՝ 2,321,750.1 հազար դրամի չափով:

2. Նախագծա-նախահաշվային արժեքի մնացորդային գումարից 2,321,750.1 հազար դրամը կազմում է <<Արմավիր>> քրեակատարողական հիմնարկի գույքի, սարքավորումների և ինժեներատեխնիկաման միջոցների ձեռքբերման գումարները, հետևաբար շինարարական աշխատանքների համար մնացորդային գումարը կազմում է՝ 3,541,188.5 հազար դրամ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐՄԱՎԻՐ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ և ՄԻ ՇԱՐՔ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ և ՋԵՌՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը (այսուհետ՝ ՔԿ հիմնարկ) նախատեսած է 1240 դատապարտված անձանց պահելու համար, նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմվել են 2007 թվականին, նույն թվականից էլ սկսվել է շինարարական աշխատանքները: Մինչև 2009 թվականի մարտ ամիսը ՔԿ հիմնարկում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- արտաքին պարիսպի կառուցում 1196.8 մ ^{3}
- ներքին արգելապատի հիմքի իրականացում 775.6 մ3
- բոլոր մասնաշենքերի հիմքերի իրականացում 13500 մ3
- հիմքերի ջրամեկուսացում 26 400 մ^2
- տարածքի պլանավորում զրոյական մակարդակի 18 700 մ^2
- բոլոր մասնաշենքերի ցոկոլային հատվածի կառուցում 6 000 մ^3

ՔԿ հիմնարկի կառուցման և համապատասխան սարք-սարքավորումներով հագեցման համար 2007թ. նախագծա-նախահաշվային փաստաթղթերով անհրաժեշտ էր 8,322,0մլն դրամ, որից իրացվել է 2,587.2 մլն. դրամը, որից

- 2006թ. 11.5 հա հողատարածքի ձեռք բերում - 111,1 մլն. դր.
- 2007թ. նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում - 119,0 մլն. դր.
  կապիտալ շինարարություն - 456,8 մլն. դր.
- 2008թ. կապիտալ շինարարություն - 1,604,9 մլն. դր.
  հեղինակային հսկողություն - 3,4 մլն. դր.
  տեխնիկական հսկողություն - 32,0 մլն. դր.
- 2009թ. նախատեսվել է կապիտալ շինարարություն 1,307.7մլն. դրամի, որից նույն տարում որպես կանխավճար վճարվել է 260.0 մլն. դրամ, իսկ մնացորդային գումարը ՀՀ կառավարության 2009թ. մարտի 26-ի թիվ 302-Ն որոշմամբ ժամանակավորապես կասեցվել է:

ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ քաղաքաշինության նախարարության համապատասխան մասնագետների կատարած խոշորացված վերահաշվարկի հիման վրա՝ հաշվի առնելով գների բարձրացումը, հիմնարկի կապիտալ շինարարական աշխատանքների ավարտման և ինժիներատեխնիկական ու այլ սարքավորումներով հագեցման համար անհրաժեշտ կլինի 10.0 մլրդ. դրամ: Տվյալ արժեքն ամրագրված է նաև ՀՀ կառավարության 2009թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած նիստի թիվ 51 արձանագրային որոշմամբ, որն իր մեջ ներառում է մոտ 1.3 մլրդ. դրամի անհրաժեշտ գույք և սարքավորումներ, 1.6 մլրդ. դրամի ինժեներատեխնիկական միջոցներ, իսկ միայն կապիտալ շինարարության համար՝ մոտ 7,1մլրդ. դրամ:

ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար պարոն Կ. Կարապետյանի մասնակցությամբ վերանայված նախագծա-նախահաշվային աշխատանքների արդյունքում առաջարկվել է զուտ կապիտալ շինարարության համար նախատեսված մոտ 7.1մլրդ. դրամը կրճատել մոտ 634.2 հազ. դրամով, որի արդյունքում՝ միայն կապիտալ շինարարության ավարտման համար անհրաժեշտ կլինի մոտ 6,5 մլրդ դրամ:

2010 թվականին «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կապիտալ շինարարության իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեով գումարներ չեն հատկացվել:

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցման և մի շարք քրեակատարողական հիմնարկների գազաֆիկացման և ջեռուցման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցման աշխատանքները ավարտին հասցնելու, որը կբերի քրեակաատրողական հիմնարկներում պահվող ազատազրկվածների թվաքանակի բեռնաթափմանը և կապահովի ցմահ դատապարտված անձանց մեկտեղ և միջազգային չափանիշներին համապատասխան պահելուն, ինչպես նաև մի շարք քրեակատարողական հիմնարկների գազաֆիկացման և ջեռուցման աշխատանքները իրականացնելու համար արդյունավետ միջոցներ ձեռնարկելու, համակարգելու և դրանց իրականացնելու անհրաժեշտությամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ N1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐՄԱՎԻՐ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցման և մի շարք քրեակատարողական հիմնարկների գազաֆիկացման և ջեռուցման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի կամ եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ N2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐՄԱՎԻՐ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցման և մի շարք քրեակատարողական հիմնարկների գազաֆիկացման և ջեռուցման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է: